17586

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ-10

ք. Երևան

21.10.2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն,ի դեմս կազմակերպության ղեկավար Գրիգոր Երիցյանի այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը «Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղված աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 1598.4 հազար (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն

Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ՝ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել << պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է՝ ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից

գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 2021 թվականի հոկտեմբերի 15-ից 2021 թվականի դեկտեմբերի 15-ն է, իսկ հաշվետվությունների ընդունման ժամկետը՝ մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ը:

7.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2021 թվականի հոկտեմբերի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական

հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն

հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք.Երևան, 0019 Բաղրամյան 45
Կառավարական տուն N 2	apy@apy.am
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ,
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 163048802066 ,ՀՎՀՀ 02247522
Պատվիրատուի ստորագրությունը Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	ՀԿ-ի ղեկավար՝
Վահրամ Գասպարյան	**Գրիգոր Երիցյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ.Տ.

Հավելված 1
2021թ. Դեկտեմբերի 21-ին
կնքված N ԵՔ-ԴՄ 10 պայմանագրի

«Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղված աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը» դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն

Վերջին երկու տարիների ընթացքում հայ հասարակությունն անցավ բազում մարտահրավերների միջով: COVID-19 համավարակը և Հայաստանի ու Ադրբեջանի միջև ռազմական գործողությունների խիստ ծանր հետևանքները մեծ ազդեցություն ունեցան հայաստանյան աշխատաշուկայի վրա: Ընթացիկ հումանիտար, տնտեսական և առողջապահական ճգնաժամերն իրենց բացասական ազդեցությունն ունեցան հասարակության տարբեր խոցելի խմբերի և հատկապես խոցելի երիտասարդների զբաղվածության վրա: Երիտասարդներն առավելապես կրեցին պատերազմի, COVID-19-ով պայմանավորված սահմանափակումների և ստեղծված տնտեսական ճգնաժամի հետևանքները:

Երիտասարդների զբաղվածության հարցերն առավել սուր են ՀՀ մարզերում: Մարզերի գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող շատ երիտասարդներ ստիպված են լքել իրենց բնակավայրը՝ զբաղվածության, կրթական, տնտեսական և ժամանցի հնարավորությունների բացակայության պատճառով:

Ըստ տարբեր ուսումնասիրությունների՝ Հայաստանում աշխատանքային զբաղվածություն չունեցող, չսովորող կամ ուսուցում չանցնող երիտասարդների տեսակարար կշիռը տարածաշրջանում ամենաբարձրներից մեկն է: Ընդ որում 15-ից 24 տարեկան երիտասարդների շրջանում աշխատանքային զբաղվածություն չունեցողների տոկոսը (27%) ավելի քան կրկնակի գերազանցում է ԵՄ 28 երկրների 11% միջին ցուցանիշը: 15-ից 29 տարեկան երիտասարդների շրջանում գործազրկությունը կազմում է 33%, ընդ որում վերջիններիս խմբում հատկապես բարձր է երիտասարդ կանանց գործազրկության ցուցանիշը՝ 42%:

Զբաղվածության ոլորտում գործող ծրագրերի ցածր արդյունավետության մասին կարող է վկայել երիտասարդների շրջանում մի քանի տարի շարունակ պահպանվող գործազրկության բարձր ցուցանիշը: Գործազրկության պատճառները բազմազան են, հետևաբար հիմնախնդրին հասցեականորեն արձագանքող ծրագրերը պետք է անդրադառնան այդ բոլոր պատճառներին:

Հաշվի առնելով երիտասարդության շրջանում գործազրկության բարձր և տնտեսական ակտիվության ցածր ցուցանիշները՝ «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության առաջնային խնդիրներից մեկն է այս ծրագրի միջոցով աջակցել հատկապես երիտասարդների խոցելի խմբերի ներկայացուցիչներին զարգացնելու իրենց տնտեսական ներուժը, աշխատաշուկայում դառնալու ավելի մրցունակ, ծանոթանալու աշխատաշուկայի

իրավիճակին և գործատուի պահանջներին, ստեղծելու օգտակար կապեր գործատուների հետ և ծանոթանալու աշխատանք փնտրելու ուղիներին:

Կազմակերպության փորձառությունը

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն հիմնադրվել է 2009 թվականին Երևանում: Կազմակերպության հիմնական նպատակն է ակտիվ քաղաքացիության և երիտասարդության մասնակցության խթանումը՝ նպաստելով երիտասարդության շրջանում ժողովրդավարական արժեքների և սկզբունքների տարածմանն ու ընկալմանը: Ավելի քան 12 տարի է, ինչ ՀԱԵ-ն աջակցում, ոգեշնչում և ներգրավում է երիտասարդներին՝ զարգացնելու իրենց առաջնորդական հմտությունները, նպաստելու քաղաքացիական պատասխանատվության բարձրացմանը և ուղղորդելու գործել որպես փոփոխություն իրականացնողներ՝ կարողությունների զարգացման միջոցով, երիտասարդներին օգնելով ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ, ապահովելով շարժունակության հնարավորություններ և ներգրավելով երիտասարդներին կամավորական ծրագրերում:

2014-2020 թվականների ընթացքում ՀԱԵ-ն իրականացրել է ավելի քան 300 տեղական, տարածաշրջանային և միջազգային ծրագրեր՝ ներգրավվելով ավելի քան 50.000 երիտասարդների: Կազմակերպության հիմնական ուղղություններն են ակտիվ քաղաքացիության կրթությունը, երիտասարդների տնտեսական հզորացումը, ակտիվ մասնակցությունն ու քաղաքացիական կրթությունը: ՀԱԵ-ն հատկապես մասնագիտացած է կրթությունից և աշխատաշուկայից դուրս մնացած, մարզերում և սահմանամերձ համայնքներում բնակվող խոցելի երիտասարդների ներգրավվածության մեջ: Իր ընթացիկ ռազմավարական ծրագրի շրջանակներում (2018-2023) ՀԱԵ-ն նպատակ ունի խթանել Հայաստանում երիտասարդ բնակչության զբաղվածության և ինքնազբաղվածության հնարավորությունները՝ դրանով իսկ երիտասարդության շրջանում նվազեցնելով աղքատության, միգրացիայի և «ուղեղի արտահոսքի» բարձր մակարդակը:

ՀԱԵ-ն ծրագրեր է իրականացրել Եվրոպական Միության, ԱՄՆ դեսպանության, Միջազգային զարգացման համագործակցության իսպանական գործակալության, ՄԱԿ-ի, ՄԱԶԾ-ի և այլ միջազգային կառույցների հետ: Անկախ և տարբեր կոնսորցիումների մաս կազմելով՝ ՀԱԵ-ն 2019-ից 2020 թվականների իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք ընդհանուր գումարը կազմել է շուրջ 1,000,000 եվրո: 2020-2021 թվականներին պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխված քաղաքացիներին աջակցելու նպատակով կազմակերպությունն իրականացրել է տասնյակ ծրագրեր, այդ թվում մարդասիրական ճգնաժամից տուժած մարդկանց աջակցել է հոգեբանական ծառայությունների, ինչպես նաև սննդի, հիգիենայի պարագաների և հագուստի տրամադրման տեսքով:

Կազմակերպությունը երիտասարդների զբաղվածության բնագավառում իրականացրել է տասնյակ ծրագրեր: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի ֆինանսավորմամբ կազմակերպությունն իրականացրել է «Հմտությունների բարելավում՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցման միջոցով Վայոց ձորի, Գեղարքունիքի և Սյունիքի սահմանամերձ համայնքներում» ծրագիրը, որի շրջանակներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության

համագործակցության արդյունքում Սյունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում գտնվող Արցախի Հանրապետության 70 գործազուրկ քաղաքացիների համար 2021 թվականի փետրվարի 1-ից մինչև 2021 թվականի մայիսի 31-ը իրականացվել է աշխատանքային պրակտիկայի ծրագիր՝ աշխատաշուկայում նրանց մրցունակ դարձնելու և աշխատանք գտնելու հնարավորությունները մեծացնելու նպատակով: Ծրագրի արդյունքում Արցախից Հայաստան տեղափոխված շուրջ 70 անձ զարգացրեցին իրենց անձնական և մասնագիտական կարողությունները:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ՝ ԳՄՀԸ (GIZ) -ի կողմից իրականացող «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կողվկասում» (EPIC) ծրագրի շրջանակներում, «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ը Հայաստանում իրականացնում է Զբաղվածության դպրոցներ: Հայաստանում «Զբաղվածության և Ձեռնարկատիրության դպրոց» մեթոդաբանությունն առաջին անգամ իրականացվել է 2019-2020 թթ -ին EPIC ծրագրի շրջանակներում «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի կողմից, որից հետո մեթոդաբանությունը Զբաղվածության պետական գործակալությանը փոխանցելու նպատակով կազմակերպվել են առցանց դասընթացներ՝ Զբաղվածության պետական գործակալության և Երևանի զբաղվածության տարածքային կենտրոնների թվով 17 մասնագետի մասնակցությամբ:

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ը իր միջազգային գործընկերների աջակցությամբ իրականացնում երիտասարդների զբաղվածության մի քանի ընթացիկ ծրագրեր, այդ թվում՝

- Տեղահանված կանանց հզորացում (Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ)
- «ԵՄ-ն հանուն աշխատանքային իրավունքների. Հայաստանում քաղաքացիական ձայնի և դերի հզորացում՝ հանուն աշխատանքային իրավունքների և սոցիալական պաշտպանություն» (Եվրոպական Միության Ֆինանսավորմամբ)
- Տեղահանված անձանց կայունության ամրապնդում Արարատի, Կոտայքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում (Եվրոպական Միության Ֆինանսավորմամբ)

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

«Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղված աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը» ծրագրի նպատակն է *նպաստել Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզերում և Երևանում բնակվող 18-25 տարեկան 30 գործազուրկ և տնտեսապես անմրցունակ երիտասարդների զբաղվածության կարողությունների զարգացմանը և աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:*

Ծրագրի խնդիրներն են՝

- Նպաստել 18-25 տարեկան գործազուրկ երիտասարդների զբաղվածության կարողությունների զարգացմանը՝ ոչ-ֆորմալ կրթական դասընթացների, քննարկումների, գործնական վարժությունների, ինչպես նաև մասնագետների կողմից անհատական և թիրախային խորհրդատվության միջոցով:

- Ծանոթացնել 18-25 տարեկան գործազուրկ երիտասարդներին Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատկություններին, գործատուների հիմնական պահանջներին՝ դրանով իսկ նպաստելով նրանց մրցունակության բարձրացմանն աշխատաշուկայում:

- Զբաղվածության դպրոցի միջոցով զարգացնել ծրագրի մասնակիցների սոցիալական և առաջնորդական հմտությունները, բարձրացնել նրանց ինքնագնահատականը և նախաձեռնողականությունը, տրամադրել սթրեսի կառավարման և բանակցությունների տեխնիկայի հմտություններ:

- Զբաղվածության դպրոցի միջոցով նպաստել մասնակիցների մասնագիտական զարգացմանը՝ օգնելով սահմանել նրանց մասնագիտական նպատակները:

- Զարգացնել մասնակիցների գրավոր և բանավոր հաղորդակցման, անձնական բրենդինգի, CV և ուղեկցող նամակի պատրաստման, սոցիալական ցանցերի օգտագործման հմտությունները:

- Կազմակերպել հանդիպումներ գործատուների հետ և խրախուսել մասնակիցների կորպորատիվ կամավորությունը՝ խթանելով ընկերությունների և աշխատանք փնտրողների միջև երկարաժամկետ փոխհարաբերություններ:

- Մասնակիցներին տրամադրել ֆինանսական գրագիտության հմտություններ՝ կենտրոնանալով անձնական ֆինանսների կառավարման, բյուջետավորման և հարկային պլանավորման վրա:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են՝

- 60 երիտասարդներ մասնակցում են ծրագրի նախընտրական փուլին:

- 30 մասնակից ընդգրկվում է Զբաղվածության դպրոցում: Մասնակիցների 50% -ը և ավելին երիտասարդ կանայք են, այդ թվում Արցախից տեղահանված երիտասարդ կանայք:

- Մասնակիցների առնվազն 75%-ը մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը անցնում է աշխատանքի:

- Մասնակիցների առնվազն 10%-ը մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը սկսում է միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն:

- Մասնակիցները զարգացնում են իրենց սոցիալական և առաջնորդական հմտությունները, բարձրացնում են ինքնագնահատականը և նախաձեռնողականությունը բարելավում են գրավոր և բանավոր հաղորդակցման, անձնական բրենդինգի և սոցիալական ցանցերի օգտագործման հմտությունները, որոնք օգտագործում են իրենց մասնագիտական զարգացման և կարիերայի առաջխաղացման համար:

- Մասնակիցներն ակտիվորեն ներգրավվում են աշխատաշուկայում, բարձրանում են նրանց տնտեսական մասնակցության աստիճանը և եկամուտները:

- Մասնակից երիտասարդները ձեռք են բերում տնտեսական անկախություն և բարձրանում է մասնակիցների սոցիալ-տնտեսական մասնակցությունը և ակտիվությունը աշխատաշուկայում:

Գործողություններ

Գործողություն 1 - Ծրագրի վերաբերյալ Տեղեկատվության և իրազեկման բարձրացման տեղեկատվական արշավի անցկացում: Ծրագրի մեկնարկին կսկսվի իրազեկության բարձրացման արշավ՝նպատակային լսարանին և շահագրգիռ կողմերին տեղեկացնելու ծրագրի նպատակների, պլանավորված գործունեության և բոլոր արդյունքների վերաբերյալ: Զուգահեռաբար, կիրառվելու են տարածման բոլոր համապատասխան գործիքները (անհատական հանդիպումներ, համայնքային հանդիպումներ, թռուցիկներ, սոցիալական մեդիա և այլն) ՝շահառուների առավել հեռավոր և խոցելի կարգերին հասնելու համար:

Գործողություն 2 - Զբաղվածության դպրոցի դիմորդների հայտերի վերլուծություն՝ նախապես մշակված չափանիշների հիման վրա:

Գործողություն 3 – Ընտրության առաջին փուլ դիմորդների համար: Դպրոցի փորձագետներն իիրականացում են մեկօրյա դասընթաց՝ աշխատունակության հմտությունների վերաբերյալ՝ այն դիմորդների համար, ովքեր ներկայացրել են ամենաուժեղ հայտերը: Այս դասընթացները կարևոր տեղեկատվություն և գիտելիք կփոխանցեն ներկաներին, և դա հնարավորություն կտա փորձագետներին իրականացնել մանրակրկիտ ընտրության գործընթաց՝ դիտարկելով խմբի դինամիկան և առանձին մասնակիցների մոտիվացիան: Նախընտրական դասընթացին մասնակցում է 60 երիտասարդ:

Գործողություն 4 - Մասնակիցների վերջնական ընտրություն: Դպրոցի փորձագետներ շարունակում են ընտրության գործընթացը և 45 դիմորդների հրավիրում են անհատական հարցազրույցների, որոնցից 30-ն ընտրվում է նախնական խմբից: Հիմնական նպատակը տարիքային, սեռի, հետաքրքրությունների, կրթական հիմքի, որակավորումների և հմտությունների տեսանկյունից ստեղծել բազմազան խումբ, որպեսզի նրանք լրացնեն միմյանց և փոխանակեն գիտելիքներն ու հմտությունները:

Գործողություն 5 - Զբաղվածության դպրոցի իրականացում: Ընտրված 30 մասնակիցները շաբաթական 2 անգամ հանդիպում են Զբաղվածության դպրոցում: Առաջին ամսվա ընթացքում մասնակիցները ինտենսիվորեն բարելավում են իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ հետևյալ թեմաներով՝

- Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատկությունները,
- Գործատուների հիմնական պահանջները,
- Սոցիալական և առաջնորդական հմտություններ:
- Սթրեսի կառավարում
- Բանակցությունների տեխնիկա,

- Գրավոր և բանավոր հաղորդակցում,
- Անձնական բրենդինգ,
- CV և ուղեկցող նամակի պատրաստում,
- Սոցիալական ցանցերի օգտագործման հմտությունները:
- Ֆինանսական գրագիտություն հմտություններ,
- Անձնական ֆինանսների կառավարում:

Գործողություն 6 - Անհատական խորհրդատվություն դպրոցի փորձագետի հետ, աշխատանքի դիմում հայտերի կազմում, աջակցություն աշխատանքի ընդունվելու հարցում, կորպորատիվ կամավորություն և գործատուների հետ կապերի հաստատում:

Դասընթացների և անհատական խորհրդատվության հիմնական թեմաներն են՝

- հայաստանյան աշխատաշուկայի առանձնահատկություններ, մասնագիտական նպատակների սահմանում, սթրեսակայունություն,
- ճկունություն և որոշումների կայացում, բանակցային հմտություններ, հաղորդակցական հմտությունների զարգացում, կապերի հաստատման հմտություններ, անձնական բրենդինգ,
- ինքնակենսագրականի կազմում, աշխատանքային հարցազրույց, ձեռնարկատիրական ոլորտի օրենսդրություն, հարկային և կենսաթոշակային համակարգ, շուկայի վերլուծություն,
- կազմակերպչական և կառավարչական հմտություններ, նորարարական գաղափարների հղացում,
- պետական և ոչ պետական աջակցության ծրագրեր:

Ծրագրի մեկնարկը կլինի 2021 թվականի հոկտեմբերի 15-ին և Նախարարության ֆինանսավորման մասով կավարտվի 2021 թվականի դեկտեմբերի 15-ին:
Ծրագրի վերջնական ավարտը կլինի 2022 թվականի մարտի 1-ին:

Հ/Հ	Գործողություն	Պատասխան ատու	Ամիս					
			1	2	3	4	5	6
1	Ծրագրի ղեկավարման, ֆինանսական և հաղորդակցության ընդհանուր ռազմավարության պլանավորում:	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան Ծրագրի հաշվապահ՝Հայկ Խաչատրյան	X					

2	Աշխատանքային պայմանագրերի պատրաստում	Ծրագրի հաշվապահ՝Հայկ Խաչատրյան	X					
3	Զվաղվածության փորձագետի հետ ուսումնական պլանի մշակում	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան Զբաղվածության փորձագետ՝ Սոնա Հովսեփյան	X					
4	Ծրագրի գնահատման համար նախատեսված գործիքների մշակում	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան	X					
5	Ծրագրի վերաբերյալ Տեղեկատվության և իրազեկման բարձրացման տեղեկատվական արշավի անցկացում: Մասնակիցների կանչ, կանչի տարածում:	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան Զբաղվածության փորձագետ՝ Սոնա Հովսեփյան	X					
6	Զբաղվածության դպրոցի դիմորդների հայտերի վերլուծություն՝ նախապես մշակված չափանիշների հիման վրա:	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան Զբաղվածության փորձագետ՝ Սոնա Հովսեփյան	X					
7	Ընտրության առաջին փուլ դիմորդների համար	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան	X					

8	Մասնակիցների վերջնական ընտրություն	Զբաղվածության փորձագետ՝ Սոնա Հովսեփյան	X					
9	Զբաղվածության դպրոցի իրականացում	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան Զբաղվածության փորձագետ՝ Սոնա Հովսեփյան		X	X			
10	Անհատական խորհրդատվություն դպրոցի փորձագետի հետ, աշխատանքի դիմում հայտերի կազմում	Զբաղվածության փորձագետ՝ Սոնա Հովսեփյան			X			
11	Ծրագրի ավարտից հետո Աջակցություն աշխատանքի ընդունվելու հարցում	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան Զբաղվածության փորձագետ՝ Սոնա Հովսեփյան				X	X	X
12	Դպրոցի գնահատում և արդյունքների ամփոփում	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան			X			
14	Ծրագրի բովանդակային և ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում:	Ծրագրի համակարգող՝ Աննա Թովմասյան Ծրագրի հաշվապահ՝Հայկ Խաչատրյան			X			

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Ծրագրի ուղղակի շահառուներն են Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզերի գյուղական և քաղաքային համայնքներում և Երևանում բնակվող 18-ից 25 տարեկան գործազուրկ և տնտեսապես անմրցունակ երիտասարդները: Ծրագրի մասնակիցների 50%-ը և ավելին երիտասարդ կանայք են, այդ թվում Արցախից տեղահանված երիտասարդ կանայք: Ընտրության ժամանակ նաև առավելություն կտրվի մարտական գործողությունների մասնակցած երիտասարդներին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երիտասարդներին: Մասնակիցների առնվազն 75%-ը ծրագրի ավարտին կանցնի աշխատանքի, իսկ առնվազն 10%-ը կներգրավվի միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթության համակարգում:

Ընտրված 30 մասնակիցները շաբաթական 2 անգամ կհանդիպեն Զբաղվածության դպրոցում: Առաջին 3 ամիսների ընթացքում մասնակիցները ինտենսիվորեն կբարելավ են իրենց գիտելիքներն ու հմտությունները հայաստանյան աշխատաշուկայի առանձնահատկությունների և գործատուների հիմնական պահանջների վերաբերյալ, ձեռք կբերեն սոցիալական և առաջնորդական հմտություններ, ինչպես նաև սթրեսի կառավարման, գրավոր և բանավոր հաղորդակցության, անձնական բրենդինգի, սոցիալական ցանցերի օգտագործման, ֆինանսական գրագիտության և անձնական ֆինանսների կառավարման հմտություններ:

Զբաղվածության դպրոցի միջոցով կզարգանան ծրագրի մասնակիցների սոցիալական և առաջնորդական հմտությունները, կբարձրացնա նրանց ինքնագնահատականը և նախաձեռնողականությունը: Դպրոցը կնպաստի մասնակիցների մասնագիտական զարգացմանը՝ օգնելով սահմանել նրանց մասնագիտական նպատակները:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի հիմանական ռիսկերը կապված են համավարակի հնարավոր ալիքի տարածման հետ, որը կարող է ընդհատել կամ ստիպել տեղափոխել ծրագրի համար նախատեսված ժամանակահատվածը այլ՝ ավելի ուշ ժամանակահատվածի:

Մենք նախատեսել ենք նաև ծրագրի առցանց իրականացման ֆորմատ, եթե նման ռիսկ լինի այն ժամանահատվածում, երբ պետք է իրականացվի Զբաղվածության դպրոցը:

Ծրագրի աշխատակազմը

Աննա Թովմասյան (Ծրագրի համակարգող): Աննա Թովմասյանը երիտասարդական աշխատող է: 2016 թվականից աշխատում է «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ում որպես ծրագրերի ղեկավար: Այս ընթացքում նա համակարգել է տեղական և միջազգային տասնյակ ծրագրեր, որոնք միտված են եղել երիտասարդների տնտեսական հզորացմանը, ձեռնարկատիրական հմտությունների զարգացմանը և երիտասարդների տնտեսական ներուժի բացահայտմանը: Աննա Թովմասյանը ղեկավարել է ծավալուն ծրագրեր, որոնք ֆինանսավորվել են Եվրոպական Միության, Հայաստանում Գերմանիայի դեսպանության, Արևելյան գործընկերության ֆորումի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների կողմից:

Սոնա Հովսեփյան (Զբաղվածության փորձագետ): Սոնա Հովսեփյանը զբաղվածության և մարդկային ռեսուրսների ղեկավարման մասնագետ է: Որպես մարդկային ռեսուրսների ղեկավար աշխատել է տարբեր ընկերություններում, այդ թվում «ՎիվաՍել-ՄՏՍ», «Գլոբբինգ»,

«Սիլ Ինշուրանս»: 2021 թվականից Սոնա Հովսեփյանը համագործակցում է «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի հետ որպես զբաղվածության փորձագետ՝ խմբային և անհատական խորհրդատվություն տրամադրելով կազմակերպության գործազուրկ շահառուներին:

Հայկ Խաչատրյան (Հաշվապահ): Հայկ Խաչատրյանը «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ ֆինանսական գծով ղեկավարն է: Ծրագրի հաշվապահ Հայկ Խաչատրյանը վարում է կազմակերպության հաշվապահությունը՝ աշխատելով տեղական և միջազգային ծրագրերի հաշվապահության և ֆինանսական զեկույցների մշակման վրա: Հայկ Խաչատրյանը վարում է նաև մի քանի այլ ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահությունը, այդ թվում՝ «Բազմազանություն» ՀԿ, «Երիտասարդներ հանուն փոփոխության» ՀԿ, «Համախմբված երիտասարդների միություն» ՀԿ, «Բու լեռնահեծանվային պարկ» ՀԿ, «Հավասարություն բոլորի համար» ՀԿ և այլն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող ծրագրի						
	անվանումը	**բովանդա-կությունը**	**Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործա-ռույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնա-հատման չափանիշները**	**Միջոցառման իրականացման վերջնաժամկետը**	**Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը**	**Պահանջվող գումարը (դրամ)**
1	Ծրագրի նախապատրաստական փուլ	Ծրագրի ղեկավարման, ֆինանսական և հաղորդակցության ընդհանուր ռազմավարության պլանավորում: Աշխատանքային պայմանագրերի պատրաստում: Զվաղվածության փորձագետի հետ ուսումնական պլանի մշակում: Ծրագրի գնահատման համար նախատեսված գործիքների մշակում:	Ծրագրի նապապատրաստում, ծրագրի թիմի կազմավորում և ուսումնական պլանի մշակում:	Կնքված աշխատանքային պայմանագրերի առկայություն: Մշակված ուսումնական պլանի առկայություն:	Հոկտեմբերի 15, 2021	Հոկտեմբերի 20, 2021	0
2	Ծրագրի վերաբերյալ	Ծրագրի մեկնարկին կսկսվի իրազեկության բարձրացման	Տեղեկատվական արշավի իրականացում	Առնվազն 150 մասնակցության			

	Տեղեկատվության և իրազեկման բարձրացման տեղեկատվական արշավի անցկացում: Մասնակիցների ընտրություն:	արշավ՝նպատակային լսարանին և շահագրգիռ կողմերին տեղեկացնելու ծրագրի նպատակների, պլանավորված գործունեության և բոլոր արդյունքների վերաբերյալ:	Դպրոցի մասնակիցների ընտրություն: Զբաղվածության դպրոցի դիմորդների հայտերի վերլուծություն՝ նախապես մշակված չափանիշների հիման վրա:	հայտերի ստացում: Առնվազն 2 հրապարակում ծրագրի մասին: Զբաղվածության դպրոցի դիմորդների հայտերի վերլուծություն և ընտրություն:	Հոկտեմբերի 20, 2021	Նոյեմբերի 5, 2021	500,000
3	Զբաղվածության դպրոցի իրականացում:	Ընտրված 30 մասնակիցները շաբաթական 2 անգամ հանդիպում են Զբաղվածության դպրոցում: Մասնակիցներն ինտենսիվորեն բարելավում են իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ հետևյալ թեմաներով՝ 1. Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատկությունները, 2. Գործատուների հիմնական պահանջները, 3. Սոցիալական և առաջնորդական հմտություններ: 4. Սթրեսի կառավարում 5.Բանակցությունների տեխնիկա,	Զբաղվածության դպրոցի իրականացում:	Մասնակիցների կողմից ստորագրված ցանկ: Դասընթացի օրակարգ: Մասնակիցների գնահատման և հետադարձ կապի թերթիկների լրացում:	Նոյեմբերի 5	Դեկտեմբերի 5	832,000

		6. Գրավոր և բանավոր հաղորդակցում, 7. Անձնական բրենդինգ, 8. CV և ուղեկցող նամակի պատրաստում, 9.Սոցիալական ցանցերի օգտագործման հմտությունները: 10. Ֆինանսական գրագիտություն հմտություններ, 11. Անձնական ֆինանսների կառավարում:					
	Ընդամենը՝ 1,332.000						
	ԱԱՀ՝ 266.400						
	Ընդամենը՝ 1,598.400						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայ առաջադեմ
երիտասարդություն» ՀԿ
ք.Երևան, 0019 Բաղրամյան 45
apy@apy.am
Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Սպանդարյան
մ/ճ,
Հ/Հ 163048802066 ,ՀՎՀՀ 02247522
ՀԿ-ի ղեկավար՝
Գրիգոր Երիցյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 2
21.10.2021թ. ԵՔԴՄ- 10 ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու **Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ**

Ծրագրի անուն **«Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղված աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը»**

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
	Աշխատավարձ						
Ա1	**Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ**						
1.1	Ծրագրի համակարգող	Ամիս	2	120.000	240.000	0	720.000
1.2	Ծրագրի հաշվապահ	Ամիս	2	116.000	232.000	0	696.000
Ընդամենը Ա					**472.000**		
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Զբաղվածության գծով փորձագետ	Ամիս	2	130.000	260.000	0	650.000
2.2	Սուրճի ընդմիջում (ամսեկան 8 դաս x 5 ամիս = 40 դաս x 30 մասնակից = 1200)	Անձ/ ընդմիջում	1200	800	300.000	660.000	960.000
2.3	Ճանապարհածախսի փոխհատուցում (20 մասնակից մարզերից x 40 դաս x միջինում 800 դրամ)	Մասնակից / դաս	800	800	300.000	340.000	640.000
2.4	Զբաղվածության դպրոցի տարածքի վարձակալություն	Ամիս	5	150.000	0	750.000	750.000
Ընդամենը Բ					**860.000**		
Դ	**Վարչական ծախսեր**						
4.1	Հաղորդակցության ծախս	Ամիս	6	25.000	0	150.000	150.000
Ընդամենը					**1.332.,000**	**1.900.000**	**3.232.000**
ԱԱՀ					**266.400**		
ԸՆԴԱՄԵՆԸ					**1.598.400**		

Հ/Հ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1	Ծրագրի համակարգող	240.000	6 ամիս աշխատավարձ x 120.000 դրամ
1.2	Ծրագրի հաշվապահ	232.000	6 ամիս աշխատավարձ x 116.000 դրամ
	Ընդամենը Ա		
1.416.000			
	Ծրագրային ծախսեր		
2.1	Զբաղվածության գծով փորձագետ	260.000	
2.2	Սուրճի ընդմիջում	300.000	ամսեկան 8 դաս x 5 ամիս = 40 դաս x 30 մասնակից = 1200 x 800 դրամ 1 անձի սուրճի ընդմիջումը / Սուրճի ընդմիջման գումարի մի մասը համաֆինանսավորվում է դիմող կազմակերպության կողմից:
2.3	Ճանապարհածախսի փոխհատուցում	300.000	20 մասնակից մարզերից x 40 դաս x միջինում 800 դրամ ճանապարհածախսի փոխհատուցում /գնառաջարկ չի ներկայացվում, քանի որ նախատեսվում է օգտվել բացառապես հանրային տրանսպորտից Արմավիր-Երևան-Արմավիր, Արարատ-Երևան-Արարատ, Արագածոտն-Երևան-Արագածոտն, Կոտայք-Երևան-Կոտայք/
Ընդամենը		1.332.000	
ԱԱՀ		266.400	
ԸՆԴԱՄԵՆԸ		1.598.400	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝
Վահրամ Գասպարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Հայ առաջադեմ
երիտասարդություն» ՀԿ
ք.Երևան, 0019 Բաղրամյան 45
apy@apy.am
Հայէկոնոմբանկ ԲԲԸ, Սպանդարյան
մ/ճ,
Հ/Հ 163048802066 ,ՀՎՀՀ 02247522
ՀԿ-ի ղեկավար՝
Գրիգոր Երիցյան

/ստորագրություն/

Կ.Տ.